ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» հուլիսի 2015 թվական N 111–Ա

<<ԷԼԲԻՍՏ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2013-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՅԱՑԱԾ, ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՏՆԻՇՅԱՆ 5/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՄԱՏՆԻՇՅԱՆ 5/1, ՄԱՏՆԻՇՅԱՆ 5/2, ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ 47/1 ՀԱՍՑԵՆԵՐԻ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԵՐԻ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի <<ժ>> կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի <<Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 1998 թվականի մայիսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 822-ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով, 8-րդ, 9-րդ կետերով և հիմք ընդունելով <<ԷԼԲԻՍՏ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (հարկ վճարողի հաշվառման համարը՝ 05515597, գրանցման հասցեն՝ քաղաք Գյումրի, Մատնիշյան փողոց թիվ 5/1) տնօրեն Արտակ Ադամյանի դիմումը (քաղաքապետարանում մուտքագրված 2015 թվականի հուլիսի 08-ին N 8325 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Սահմանել արտոնություն <<Էլբիստ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2013-2014 թվականների ընթացքում գոյացած, Գյումրի քաղաքի Մատնիշյան 5/1 հասցեում գտնվող շինության գույքահարկի և Մատնիշյան 5/1, Մատնիշյան 5/2, Խրիմյան Հայրիկ 47/1 հասցեների հողի հարկի տույժերի և տուգանքների վճարումների նկատմամբ, ազատելով գույքահարկի տույժերի և տուգանքների՝ 1263908 (մեկ միլիոն երկու հարյուր վաթսուներեք հազար ինը հարյուր ութ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի և հողի հարկի տույժերի և տուգանքների՝ 63186 (վաթսուներեք հազար հարյուր ութսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի, ընդամենը՝ 1327094 (մեկ միլիոն երեք հարյուր քսանյոթ հազար իննսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա.Ադամյան
Գ. Ադամյան
Ա. Բաղեյան
Ա.Բաղրամյան
Մ.Գաբոյան
Ա.Գրիգորյան
Վ.Եդիգարյան
Հ.Խաչատրյան
Հ.Կարապետյան

Տ.Հովհաննիսյան
Վ. Հունանյան
Ն.Մեսրոպյան
Ռ.Մխիթարյան
Մ.Սահակյան

Ս. Բ Ա Լ Ա Ս Ա Ն Յ Ա Ն

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ

17 հուլիսի 2015թ.
ք.Գյումրի